

ԵԱԱ առաջնություն 2014 ,վինդսերֆինգ

5 - 10 օգոստոս 2014 թ.

Մրցույթային կանոնադրություն

1. Կանոններ`

Մրցումները անց են կացվում ըստ առաջատային մարզաձևի “ISAF 2012-2015” կանոնների :

2. Տեղեկատվություն

Տեղեկատվությունը մարզիկների համար կփաթցվի հայտարարությունների պաշտոնական ցուցատախտակներին :

3. Մրցույթային ծրագիրը

3.1 2-4 օգոստոսի- հայտերի գրանցում

5 օգոստոսի- 12.00 - հանդիսավոր բացում, 13.00- առաջին մրցարշավի մեկնարկ

5-9 օգոստոս- 12.00 - օրվա առաջին մրցարշավի մեկնարկ, 18.00- օրվա վերջին

մրցարշավի մեկնարկ

10 օգոստոս- 12.00- վերջին մրցարշավի մեկնարկ, 16.00- մրցումների փակման և պարզևատրման արարողություն- Մերֆ կենտրոնում /Ցամաքաբերդ/:

3.2 Մրցումների անցկացման դասերն ու մրցաձևերը

Մրցումները անց են կացվում RACE մրցաձևի 3 դասում և թիաբորդ դասում: աղջիկների և տղաների միջև առանձին հաշվարկով` առանց տարիքային սահմանափակման:

1.- Practical Concept ` մինչև 9 ք.մ

2.- Navigator 300 տղաներ և աղջիկներ` մինչև 7 ք.մ

3.- Mambo ` տղաներ և աղջիկներ` մինչև 5 ք.մ

4.- Թիաբորդ ` տղաներ և աղջիկներ

4 Մրցարշավների քանակը

Մրցարշավների առավելագույն քանակը 12 , մրցումները համարվում են կայացած 3 մրցարշավ յուրաքանչյուր մրցաձևում անցկացնելու դեպքում:

1 օրվա անցկացվող մրցարշավների առավելագույն քանակը- 6

5. Մրցարշավների մրցատարածք

5.1 Մրցարշավների մրցատարածքը համաձայն գծագրի , որը հանդիսանում է մրցույթային կանոնամաս : Հնարավոր են մրցատարածքի փոփոխություններ, որի մասին նախորոք կտեղեկացվեն մարզիկները:

5.2 PC & NAVIGATOR Մրցատարածքի 1,2, նշաններն են- դեղին, JOBE տիպի

լողանշանները, 3-րդը` դեղին, գնդաձև լողանշանն է , Մեկնարկային լողանշանն է 3-րդ , դեղին, գնդաձև լողանշանը; եզրագծային լողանշանն է կարմիր լողանշանը; MAMBO-ի 1-ին լողանշանն է դեղին JOBE տիպի, հետո 4- կարմիր, կլոր լողանշանն է և 3-րդ դեղին, կլոր լողանշանն է, մեկնարկը 3 լողանշանն է, իսկ եզրագիծը- կարմիր, կլոր լողանշանն է:

5.3 Նշանների շրջանցման հաջորդականությունը`

PC & NAVIGATOR-ի համար մրցատարածքը ընդհանուր է ; RACE -մեկնարկ-1-2-3-2-3-1-3- եզրագիծ : և MAMBO – մեկնարկ –1-4-3-1-3 - եզրագիծ: Մրցատարածքի բոլոր փոփոխությունների մասին մարզիկները նախորոք կտեղեկացվեն;

5.4 Մեկնարկային գիծ և եզրագիծ համարվում են մրցավարական նավի կայմի կամ դրոշի և դեղին կամ կարմիր լողանշանների միջև ընկած հատվածը :

6. ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

6.1 Մրցարշավի մեկնարկային գործընթաց /RACE/

Ազդանշան	դրոշակ և ձայնային ազդանշան	Բույեներ մինչև “Մեկնարկը բաց է” ազդանշանը
“Ուշադրություն”	Կարմիր դրոշը բարձրանում է	3
	Ձայնային ազդանշան	
“Զգուշացում”	Կարմիր դրոշը իջնում է	2
“Նախապատրաստական”	Դեղին դրոշը բարձրանում է	1
	Ձայնային ազդանշան	
	Դեղին դրոշը իջնում է	30 վրկ
“Մեկնարկը բաց է”	Կանաչ դրոշը բարձրանում է; ձայնային երկար ազդանշան	0

6.2 Մրցարշավի մասնակիցները պետք է մեկնարկեն ոչ ուշ, քան 3 րոպեից “Մեկնարկը բաց է” ազդանշանը հնչելուց հետո:

6.3 Եզրագիծը պետք է հատվի ոչ ուշ, քան 7 րոպե տվյալ խմբի եզրագիծը առաջինը հատողից հետո:

6.4 Որևէ մարզիկի կողմից ֆալշ ստարտի դեպքում կանաչ դրոշի հետ կբարձրացվի սև դրոշ և այն կիջեցվի, եթե մարզիկը վերադառնա մեկնարկի:

6.5 Ընդհանուր ֆալշ ստարտի դեպքում մարզիկները ետ են կանչվում ձայնային հատվող ազդանշանով, միաժամանակ բարձրացնելով կարմիր և սև դրոշները:

6.6 Ընդհանուր ափ կանչելու դրոշը՝ NOVEMBER, կբարձրացվի մրցավարական նավի վրա անհրաժեշտության դեպքում՝ երկար ընդհատվող ձայնային ազդանշանով:

6.7 Թիաբորդի մեկնարկը կտրվի սուլիչով առանց դրոշների:

7. Բողոքարկում և արդյունքը ուղղելու պահանջարկ

7.1 Եզրագծի մոտ հայտարարելով բողոքարկ՝ մասնակիցը անմիջապես պետք է մոտենա մրցավարական նավին և հաղորդի քարտուղարին բողոքարկվող մարզիկի համարը: Այս պահանջարկը չկատարելու դեպքում բողոքարկը համարվում է անվավեր: Բողոքարկը (արդյունքները վերանայելու պահանջարկ) պետք է գրվի ձևաթղթի վրա, մրցավարական սենյակում և պետք է տրվի գլխավոր քարտուղարին 1 ժամվա ընթացքում վերջին մարզիկի եզրագիծը հատելուց հետո: Բողոքարկված մարզիկների ցուցակը կփաթցվի հայտարարությունների տախտակին:

8. Արդյունքների հաշվառման սահմանակարգ

Միավորների հաշվառման կլասիկ մեթոդ կամ համաձայն “ISAF 2009-2012” կանոնների B8.3 կցագրի /1 տեղ -0,8 միավոր, 2-ը 2 մ.3-ը 3մ և այլն/

4 մրցարշավ անցկացնելու դեպքում հաշվի են առնվում բոլոր մրցարշավների արդյունքները

5-7 մրցարշավի դեպքում` բացառվում է 1 վատագույն արդյունքը,
8-10 մրցարշավի դեպքում` բացառվում է 2 վատագույն արդյունքը,
11-12 մրցարշավերի դեպքում բացառվում է 3 վատագույն արդյունքը:

9. Անվտանգություն

9.1 Մրցումների Կազմկոմիտեն և մրցավարական կազմը պատասխանատվություն չի կրում մրցումների մասնակիցների կյանքի ու սեփականության համար, ինչպես նաև հնարավոր մարմնական վնասվածքների ու ունեցվածքի կորստի համար` մրցումների ամբողջ ընթացքում: Յուրաքանչյուր մարզիկ մասնակցում է մրցարշավին դիմելով իր անձնական ռիսկին:

Մրցարշավի ժամանակ մրցարշավի բոլոր դասերի մարզիկները պարտավոր են ունենալ փրկագոտի (տրապեցիա):

Այս կետը խախտելու դեպքում մարզիկը կարող է որակագրկվել:

10. Ջուր դուրս գալու և ջրից դուրս գալու մասին ստորագրություն

Յուրաքանչյուր մասնակից պարտավոր է ստորագրել ջուր դուրս գալու մասին մրցութային օրվա սկզբում և մրցութային օրվա վերջում ջրից դուրս գալու մասին ոչ ուշ, քան բողոքարկման հայտերը ընդունելու ժամանակի ավարտը` մրցավարական սենյակում :Այս կետը խախտելու դեպքում մարզիկը ստանում է 2 տուգանային միավոր` այդ օրվա բոլոր մրցարշավների համար:

11. Արդարացում

Յուրաքանչյուր մարզիկ կանոնները խախտելուց կարող է արդարանալ մինչ եզրագծի հատումը մրցավարական նավի մոտ կատարելով 360 աստիճան պտույտ ցանկացած ուղղությամբ:

ՄՐՅՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ